ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶԵՅԹՈՒՆԻ 1862 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 130-ԱՄՅԱԿԻՆ

1992 Թ. Հոկտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նստաշրջան՝ նվիրված Զեյթունի 1862 թ. ապստամբության 130-ամյակին։ Նստաշրջանին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ արևելագիտության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների մի շարք աշխատակիցներ, ինչպես նաև «Զեյթուն» հայրենակցական պատմամշակութային միության անդամներ։

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հ. Ա. Ավետիսյանը։ Նա մասնավորապես նշեց, որ ինստիտուտի գիտխորհուրդը որոշել է պարբերաբար հրավիրել ազգային-ազատագրական շարժումների պատմությանը նվիրված նստաշրջաններ, որոնք առավել արժեքավորվում և կարևորվում են այժմ, մեր օրերում, երբ մեր ժողովուրդը ուզի է կանգնել պաշտպանելու իր արդար դատը, արցախահայության խնդիրը։ Միաժամանակ, ինչպես հիմնավորեց Հ. Ավետիսյանը, անցյալի ազատագրական դրվագների՝ իմացությունը և գիտական լուսաբանումը, ազատագրության համար մղվող պայքարի փորձով զինվածությունը ժողովրդին զերծ կպահի սխալներից ու կնպաստի այդ պայքարի՝ կազմակերպված հունի մեջ դնելուն և վերջնական հաջողությանը։

«Զեյթունի 1862 թ. ապստամբությունը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Պողոսյանը։ Ընդհանուր գծերով անդրադառնալով Զեյթունի պատմությանը, զեկուցողը մանրամասն ներկայացրեց օսմանյան կայսրությունում բնակվող հայերի տնտեսական, քաղաքական, հասարակական և մշակութային կացությունը, վերլուծեց հայահալած քաղաքականության պատճառները, դրանով իսկ քննելով չեռնականների՝ օսմանյան տիրապետության դեմ ընդվզելու պատճառները։ Խոսելով 1862 թ. ապստամբության մասին, աշխույժ և կենդանի խոսքով նկարագրելով նրա ընթացքը և թուրք խուժանի ու կանոնավոր զորքերի կողմից իրականացվող խժդժությունները, զեկուցողը պատմական զուգահեռներ անցկացրեց մեր օրերի հետ, նշելով Օսմանյան Թուրքիայի և ներկայիս Ադրբեջանի կառավարության քաղաքական գործելակերպի նույնությունը։ Հ. Պողոսյանն իրավացիորեն նկատեց, որ եթե թուրքական կառավարությանը չհաջողվեց կոտրել զեյթունցիների ազատաբաղձ, ոգին և պայքարելու կամքը, ապա դա պայմանավորված էր ապստամբության կազմակերպված բնույթով, զեյթունցիների՝ մինչև վերջ մարտնչելու հաստատակամությամբ և միասնությամբ։

Զեյթունի 1895 թ. ապստամբության մասին զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Է. Ա. Կոստանդյանը։ Նա վերլուծեց 1890-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից կազմակերպված չարդերի պատճառները, դրանք ներկայացնելով որպես կառավարության կողմից ծրագրված և մանրամասնորեն մշակված պետական քաղաքականություն, որի տրամաբանական պատասխանը պետք է լիներ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում բռնկված ինքնապաշտպանությունը։ Զեկուցողը Զեյթունի 1895 թ. ապստամբության կազմակերպման գործում արժանիորեն մեծ տեղ և դեր հատկացրեց Ս. Դ. Ճչկյան կուսակցության անդամներ Մլեհին, Ապահին, Աղասուն, Մխո Շահենին և այլոց, որոնք Կիլիկիա, մասնավորապես Զեյթուն էին անցել քաջակորով զեյթունցիների ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու համար։ Նկարագրելով զեյթունցիների ապստամբության հերոսական դրվագները, Է. Կոստանդյանը կանգ առավ դրա հանգուցային կետերի վրա, ըստ արժանվույն գնահատելով Զեյթունի 1895 թ. ապստամբության տեղը հայ ազատագրական շարժման պատմության մեջ։

Պատմական գիտությունների թեկնածու Ռ. Օ. Սահակյանը հանդես եկավ «1915 թ.

Մուսա լեռան ինքնապաշտպանությունը» զեկուցմամբ։ Խոսելով ցեղասպանության և դրա պատճառների մասին, զեկուցողը նշեց, որ այդ ողբերգական ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելիս հարկ է առանձնահատուկ ուշադրություն բևեռել ազգային վշտի և տառապանքի լուսավոր ու անմոռաց էջերին՝ ինքնապաշտպանական մարտերին, հատկապես Մուսա լեռան ինքնապաշտպանությանը, որը հանգամանքների բարենպաստ դասավորության, ֆրանսիական ռազմանավերի ժամանակին օգնություն հասնելու շնորհիվ պսակվեց լիակատար հաջողությամբ։

Զեկուցողը, անդրադառնալով ինքնապաշտպանության կազմակերպման հարցերին և ընթացքին, նկարագրելով բազմակի գերակշիռ հակառակորդի դեմ մարտական գործողությունները, նշեց, որ մուսալեռցիների հերոսությամբ ու անօրինակ խիզախությամբ ոգեշնչված՝ ավստրիացի հումանիստ գրող, ազգությամբ հրեա Ֆրանց Վերֆելը ստեղծել է իր «Մուսա լեռան թառասուն օրը» հերոսական պատումը, որն ավելի ուշ, 1970-ական թվականներին էկրանացվել է ամերիկյան կինեմատոգրաֆիստների կողմից։ Ցանկալի կլիներ, որ այն արտացոլվեր նաև հայ կինոյում։

Պատմական գիտությունների թեկնածու Ռ. Հ. Դասպարյանի զեկուցումը վերաբերում էր Կիլիկիայի 1919—1921 թթ. իրադարձություններին։ Անդրադառնալով առաջին աշխարհամարտի ընթացքում և հետո Կիլիկիային վերաբերող պայմանագրերին, զեկուցողը վերլուծեց Անտանտի դաշնադրության երկրների, առավելապես Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը Կիլիկիայի, մասնավորապես՝ կիլիկիահայության պապագի հարցում։ Խոսելով բեմական շարժման էության և ուղղվածության մասին, անդրադառնալով երիտթուրքերի և քեմալականների քաղաքական գործելակերպի ժառանգական կապին, Ռ. Դասպարյանը նշեց, որ վերջիններս առաջին հերթին ցանկանում էին հարվածել 1918—1919 թթ. Կիլիկիայում հաստատված մոտ 150—160.000 հայերին, քանզի նրանք հետամուտ էին պատմականորեն իրենց իսկ հայրենիքում անկախության կամ ինքնավարության ձեռք բերմանը։ Ուստի, պատահական չէր, որ Մ. Քեմալն առաջին հարվածը հասցրեց կիլիկիահայությանը։

Ընդհանուր գծերով և համառոտ անդրադառնալով Մարաշի, Հաճընի և Այնթապի դուցագնամարտերին և բարձր գնահատելով դրանք այն առումով, որ կենդանի մնացածները իրենց փրկությամբ պարտական էին հիրավի հերոսական ինքնապաշտպանական մարտերին, զեկուցողն առավել ուշադրություն դարձրեց Զեյթունի վերջին դեպքերին, զեյթունահայերի բաղսաղարյան պատմության վերջին դրվագին, նրբ դաժան և օրհասական մաքառումներից հետո ընդամենը մի խումբ զեյթունցիների է հաջողում փրկվել Թուրքական արյունոտ յաթաղանից։

Բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Գ. Սփաղլյանի զեկուցման թեման էր «Ազատագրական պայքարի արտացոլումը կիլիկյան բանահյուսության մեջ»։ Զեկուցողը պատկերավոր ներկայացրեց 1862—1921 թթ. օսմանյան բռնակալության դեմ կիլիկիահայության ընդվզումների շուրջ ստեղծված ժողովրդական հարուստ բանահյուսությունը, որը իր գեղարվեստական արժեքից բացի կարևոր է։ Նաև նրանով, որ հաճախ սկզբնաղբյուր է հանդիսանում ազատագրական պայքարի ուսումնասիրության համար։

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ազգային-ազատագրական շարժումների պատմության խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Համբարյանը։ Խոսելով Զեյթունի ապստամբությունների դասերի մասին, նա նշեց, որ զեյթունցինները կամ պետք է զենքի դիմեին, կամ պետք է ենթարկվեին, դրանով իսկ համակերպվելով կործանման դատապարտվածի փիճակին։

Ա. Համբարյանը նաև նշեց, որ Զեյթունի պատմության շատ պրոբլեմներ կարոտ են լուրջ և գիտական լուսաբանման։

Վերջում ելույթ ունեցավ «Զեյթուն» հայրենակցական պատմամշակութային միության հիմնադիր նախագահ, քիմիական գիտությունների դոկտոր Ս. Մ. Գայբակյանը։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրինությանը և զեկուցողներին անկեղծ շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով նստաշրջանի համար, նա ցանկություն հայտնեց, որ հետայսու ևս մեծ ուշադրություն դարձվի Զեյթունի պատմության դեռևս քիչ ուսումնասիրված հարցերին։ Նա միաժամանակ հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ հաղորդեց ծննդյամբ զեյթունցի ազգային մի շարք գործիչների, նրանց միության ծավալած գործունեության և աշխատանքների մասին։

Ռ. Հ. ԴԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածուներ